ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդվածին ներկայացվող ընդհանուր պահանջները.

1. Տպագրման ներկայացվող հոդվածը պետք է անդրադառնա իրավագիտության ոլորտի արդիական կոնկրետ խնդրի, լինի հիմնավորված, առաջադրի որևէ հստակ թեզ, պարունակի իրավունքի բնագավառին վերաբերող վերլուծություններ, շարադրված լինի գիտական, գրագետ և տրամաբանված լեզվով:

2. Հոդվածը կարող է լինել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն:

3. Հոդվածի ընդհանուր ծավալը պետք է լինի 20-30 էջի սահմաններում:

4. Հոդվածի օրիգինալությունը պետք է լինի առնվազն 80%:

5. Հոդվածը պետք է բաղկացած լինի (նշված հերթականությամբ).

ա) վերտառությունից (title, заглавие),

բ) հեղինակի մասին տեղեկատվությունից (data, данные),

գ) ներածությունից (introduction, введение),

դ) բուն հետազոտությունից՝ համապատասխան բաժիններով (գլուխներով) և պարագրաֆներով,

ե) եզրակացությունից (conclusion, заключение),

զ) համառոտագրից (abstract, абстракт),

է) բանալի բառերից (key words, ключевые слова),

ը) գրականության ցանկից (reference list, список литературы):

Հոդվածին ներկայացվող տեխնիկական պահանջները.

6. Տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ:

7. Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն և անգլերեն տեքստը՝ Times New Roman:

8. Հոդվածի էջերը համարակալվում են:

9. Յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) ֆորմատի և համապատասխանի հետևյալ չափանիշներին. լուսանցքներ ձախից 2 սմ, աջից՝ 1 սմ, վերևից՝ 2,5 սմ, ներքևից՝ 2 սմ:

10. Միջտողային հեռավորությունը պետք է լինի 1,5 սմ: Պարբերությունների միջև չպետք է լինի այլ հեռավորություն:

11. Պարբերությունները պետք է երկու կողմից հավասարեցված լինեն և սկսվեն 1 սմ խորքից:

12. Տեքստը, բացառությամբ՝ վերտառության և տողատակի ծանոթագրությունների, շարադրվում է 12 տառաչափով:

13. Վերտառությունը պետք է լինի 14 տառաչափով, կենտրոնում (Center) և թավ (Bold): Վերտառությունն ամբողջությամբ գրվում է մեծատառերով:

14. Տողատակի ծանոթագրությունները (References) պետք է լինեն 10 տառաչափով և երկու կողմից հավասարեցված:

<u>Հոդվածի առանձին մասերին ներկայացվող ընդհանուր պահանջները.</u>

15. Վերտառությունը պետք է բաղկացած լինի առավելագույնը 20 բառից և համապատասխանի հոդվածի բովանդակությանը: Այն ներկայացվում է եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) և չպետք է պարունակի հապավումներ, եթե դրանք հանրահայտ չեն:

16. Հեղինակի մասին տեղեկատվությունը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով, եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) և պետք է լրացվի Հավելված 1-ի նմուշների ձևաչափի վրա:

17. Եթե հոդվածի հեղինակները մի քանիսն են, ապա յուրաքանչյուր հեղինակի համար Հավելված 1-ով սահմանված տեղեկատվությունը տրվում է առանձին՝ կցված ըստ նրանց որոշած հերթականության:

<u>Հոդվածին ներկայացվող բովանդակային պահանջները.</u>

18. Ներածությունը պետք է պարունակի.

ա) թեմայի ձևակերպում,

բ) հետազոտության հիփոթեզի ձևակերպում,

գ) հետազոտության արդիականության հիմնավորում,

դ) հետազոտության նպատակի և խնդիրների ձևակերպում,

ե) օգտագործված մեթոդների վերաբերյալ տեղեկատվություն (ըստ հեղինակի ցանկության):

19. Բուն հոդվածը պետք է համապատասխանի վերտառությանը, պարունակի իրավունքի բնագավառին վերաբերող վերլուծություններ, գիտական ուսումնասիրության մեթոդների կիրառում, դրա հիման վրա՝ առաջադրված խնդիրների լուծումներ:

20. Եզրակացությունը պետք է ներառի.

ա) հետազոտության ընթացքում ձեռք բերված հեղինակային արդյունքների համառոտ ներկայացում,

բ) ուսումնասիրության եզրակացությունների ամփոփում (յուրաքանչյուր կետ պետք է նվիրված լինի Ներածության մեջ նշված խնդիրներին պատասխանելուն կամ ներածությունում նշված հիփոթեզի (եթե այդպիսիք կան) դրույթներն ապացուցելու փաստարկ հանդիսանա):

21. Համառոտագիրը ներկայացվում է եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն), 200-300 բառերի սահմանում և պետք է ներառի.

ա) խնդրի ուսումնասիրության արդիականությունն ու նպատակահարմարությունը (ուսումնասիրվող խնդրի արդիականության համառոտ և հակիրճ նկարագրությունը),

բ) հոդվածի նպատակը,

գ) հեղինակային արդյունքները (հոդվածում բացահայտվածը, հիմնավորվածը, և ապացուցվածը),

դ) ստացված արդյունքների գործնական և տեսական նշանակությունը:

22. Եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) նշվում են 5-10 բանալի բառեր, որոնք միմյանցից անջատվում են կետ-ստորակետով՝ (;):

<u>Գրագողության արգելք, հղումներ և գրականության ցանկ.</u>

23. Այլ աշխատություններից մեջբերումներ կատարելիս հեղինակը պետք է նշի դրանց աղբյուրը և կատարի պատշաճ հղում յուրաքանչյուր էջի ծանոթագրություններում, ինչպես նաև դրանց մասին նշում կատարի գրականության ցանկում:

24. Ծանոթագրություններում մենագրությանը, ուսումնական ձեռնարկներին, ատենախոսություններին կամ առանձին ձևով հրատարկված աշխատություններին հղում կատարելիս անհրաժեշտ է նշել աշխատության հեղինակի (հեղինակների) անունը (անունները), աշխատության վերտառությունը, հրատարակության վայրը և տարին, էջը *(տե՛ս՝ Հավելված 2, կետ 1)*:

25. Ժողովածուներում կամ ամսագրերում տպագրված հոդվածներին կամ աշխատություններին հղում կատարելիս անհրաժեշտ է նշել աշխատության հեղինակի անունը, աշխատության վերտառությունը (առկայության դեպքում նաև՝ DOI), ժողովածուի կամ գիտական ամսագրի անվանումը (առկայության դեպքում նաև՝ ISSN/ISBN), առկայության դեպքում՝ թողարկման հերթական համարը, հրատարակության վայրը և տարին, էջը *(տե՛ս՝ Հավելված 2, կետ 2)*:

26. Ներպետական իրավական ակտերն առաջին անգամ հիշատակելիս անհրաժեշտ է նշել դրանց ամբողջական անվանումը՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Հետագայում հնարավոր է օգտագործել նաև հեղինակի կողմից նշված կրճատ տարբերակը (օրինակ՝ *«այսուհետ՝ Օրենք»*) կամ իրավական ակտերի կրճատ անվանումները՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն:

27. Արտասահմանյան կամ միջազգային իրավական ակտերն առաջին անգամ հիշատակելիս անհրաժեշտ է նշել դրանց ամբողջական անվանումը: Հետագայում հնարավոր է օգտագործել նաև հեղինակի կողմից նշված կրճատ տարբերակը (օրինակ՝ *«այսուհետ՝ Կոնվենցիա»*):

28. Անգլալեզու աղբյուրները չեն թարգմանվում:

29. Հայերեն և օտարալեզու հղումների պարագայում փակագծում ներկայացվում են անգլերեն թարգմանությունները:

30. Համացանցային աղբյուրներից օգտվելիս ծանոթագրության մեջ անհրաժեշտ է պահպանել 21-րդ *(տե՛ս՝ Հավելված 2, կետ 1)* և 22-րդ *(տե՛ս՝ Հավելված 2, կետ 2)* կետերի կանոնները, տեղադրել համապատասխան կայքի հղումը (URL) և նշել վերջին մուտքի ամսաթիվը (access) *(տե՛ս՝ Հավելված 2, կետ 3)*:

31. Գրականության ցանկում սկզբում նշվում են իրավական ակտերը և նախադեպային որոշումները՝ ըստ լեզուների (հոդվածի հիմնական լեզու, այլ լեզու) և իրավաբանական ուժի, այնուհետև՝ տեսական աղբյուրները՝ ըստ լեզուների (հոդվածի հիմնական լեզու, այլ լեզու) և այբբենական կարգով՝ ապահովելով հաջորդական համարակալումը:

32. Հոդվածի հեղինակների ինքնամեջբերում թույլատրվում է ոչ ավելի, քան 2 անգամ:

33. Այլ անձանց մտքերը և գաղափարները որպես սեփական ներկայացնելը (այդ թվում՝ ձևափոխված) արգելվում է և համարվում է գրագողություն, որի պարագայում հոդվածի տպագրումը ենթակա է մերժման:

<u>Հոդվածի ներկայացման կարգը.</u>

34. Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին:

35. Թղթային տարբերակը պետք է ներկայացնել «Օրինականություն» գիտական հանդեսի խմբագրություն, իսկ էլեկտրոնային տարբերակը ուղարկել «Օրինականություն» գիտագործնական պարբերականի էլեկտրոնային հասցեին մինչև աշխատանքային օրվա ավարտը:

36. Թղթային և էլեկտրոնային տարբերակները պետք է լինեն նույնը:

37. Թղթային և էլեկտրոնային տարբերակները ներկայացնելու ժամանակային տարբերությունը չի կարող գերազանցել մեկ աշխատանքային օրը:

Հոդվածների ընդունումը և գրախոսումը.

38. Այն հոդվածները, որոնք չեն համապատասխանում վերոնշյալ բոլոր պահանջներին, ենթակա են վերադարձման, իսկ սխալները չշտկելու դեպքում չեն փոխանցվում գրախոսության:

39. Նշված բոլոր պահանջներին համապատասխանող հոդվածները ենթակա են անանուն և գաղտնի գրախոսման «Օրինականություն» գիտական հանդեսի գրախոսների կողմից:

40. Յուրաքանչյուր իրավունքի ճյուղին վերաբերող հոդվածը գրախոսում է տվյալ ոլորտում առնվազն իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և (կամ) տվյալ ոլորտում ակտիվ մասնագիտական գործունեություն ծավալող անձը:

41. Գրախոսը ստուգում է աշխատանքի արդիականությունը, գիտականությունը, օրիգինալությունը և առաջադրված խնդրի լուծման մակարդակը:

42. Գրախոսականում նշվում են աշխատանքի և՛ դրական, և՛ բացասական կողմերը:

43. Գործում է ակադեմիական ազատության սկզբունքը:

44. Տպագրման են ենթակա այն հոդվածները, որոնք երաշխավորվել են գրախոսի կողմից:

45. Գրախոսականների էլեկտրոնային տարբերակները կարող են տրվել առանց գրախոսող անձի ինքնության բացահայտման, բացառապես հոդվածի հեղինակին և միայն վերջինիս պահանջի դեպքում:

Կոնտակտային տվյալներ.

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 5

Էլ.հասցե՝ orinakanutyun@prosecutor.am

Հեռ՝ 010-511-506